Հաղորդում

«Փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման դեմ պայքարի հարցերով» միջգերատեսչական հանձնաժողովի 33-34-րդ նիստերի վերաբերյալ

(2017-2019թթ.)

2017-2019թթ. ժամանակահատվածում գումարվել է «Փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման դեմ պայքարի հարցերով» միջգերատեսչական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) երկու նիստ, որոնց ընթացքում, ի թիվս այլ հարցերի, քննարկվել և համաձայնեցվել են փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման (այսուհետ՝ ՓԼ/ԱՖ) դեմ պայքարին վերաբերող հիշատակման արժանի հետևյալ հարցերը.

1. ***Ռիսկերի ազգային գնահատման մեթոդաբանության վերաբերյալ*** - Հանձնաժողովի կողմից քննարկվել են ՀՀ-ում ՓԼ/ԱՖ ռիսկերի ազգային գնահատման խնդիրները, իրականացման մեթոդաբանությունը և ոլորտի միջազգային զարգացումները: Այդ նպատակով նիստին հրավիրվել էր ՓԼ/ԱՖ ռիսկերի գնահատման ոլորտում միջազգային փորձագետ, ԱՄՆ գանձապետարանի ֆինանսական հանցագործությունների քննության ավագ մասնագետ Փոլ Դեր Գարաբետյանը: Մասնակիցների կողմից կարևորվել է ՀՀ-ում ՓԼ/ԱՖ ռիսկերի պարբերական ազգային գնահատում իրականացնելու անհրաժեշտությունը, գնահատման արդյունքներով նախատեսված միջոցառումների հետևողական իրականացումը, ինչպես նաև այս ոլորտի վերաբերյալ միջազգային փորձի և միտումների շարունակական ուսումնասիրության կարևորությունը: Նիստի ընթացքում միջազգային լավագույն փորձի, մասնավորապես՝ ԱՄՆ-ի օրինակով ՓԼ/ԱՖ ռիսկերի ազգային գնահատման թեմայով զեկուցմամբ հանդես է եկել նաև Փոլ Դեր Գարաբետյանը, ով ակտիվորեն ներգրավված է եղել ԱՄՆ ՓԼ/ԱՖ ռիսկերի ազգային գնահատման աշխատանքներում:

2. ***ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում առկա միջոցառումների ծրագրի վերաբերյալ*** – Հանձնաժողովի կողմից հաստատված միջոցառումների ծրագրով նախատեսված գործողությունների կատարման հետ կապված քննարկվել է ՀՀ-ում նոր ինստիտուտների ներդրմանն առնչվող միջոցառումների իրականացումը, այդ թվում՝ հանցավոր ճանապարհով ստացված գույքի՝ առանց մեղադրական դատավճռի առկայության բռնագանձման մեխանիզմների, կալանադրված, առգրավված և բռնագրավված գույքի պատշաճ կառավարման ընթացակարգերի, իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտի ներդրման հետ կապված հարցեր: Միջոցառումների ծրագրի կատարումն ապահովելուն ուղղված աշխատանքների շրջանակներում Հանձնաժողովն իր 34-րդ նիստի ընթացքում հավանություն է տվել «Ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների

դեպքում մեղադրյալի կողմից գույքի օրինականության ապացուցում» և «Առանց մեղադրական դատավճռի հանցավոր ճանապարհով ստացված գույքի բռնագանձում» հայեցակարգերին:

3. ***ՀՀ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի 2019-2021թթ. ազգային ռազմավարության նախագծի վերաբերյալ*** – Հանձնաժողովին ներկայացվել է Փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում 2019-2021թթ. ազգային ռազմավարության նախագիծը: Ռազմավարության նախագիծը էապես տարբերվել է նախկին ռազմավարություններից թե՛ բովանդակային և թե՛ կառուցվածքային առումներով: Վերջինիս ձևաչափը, տրամաբանությունը, բովանդակությունը սահմանվել են՝ հիմք ընդունելով ՖԱԹՖ-ի Մեթոդաբանությունը (2013թ.): Ռազմավարությամբ, ի թիվս այլի, բարձր առաջնահերթության է սահմանվել ՓԼ/ԱՖ գործերի քննության արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների, իրավաբանական անձանց իրական շահառուների վերաբերյալ կեղծ կամ սխալ տեղեկությունների ներկայացման դեպքում պատասխանատվության միջոցների մշակման, քրեական արդարադատության այլընտրանքային միջոցների, այդ թվում՝ առանց մեղադրական դատավճռի հանցավոր ճանապարհով ստացված գույքի բռնագանձման ինստիտուտի ներդրման համար:

4. ***Այլ հարցերից*** կարևորվել են ՀՀ սահմանադրության 2015թ.-ի փոփոխություններով պայմանավորված «Միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու մասին» ՀՀ վարչապետի որոշման նախագծին հավանություն տալը և ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնելը, ինչպես նաև ՖԴԿ-ի և այլ գերատեսչությունների միջև համագործակցության հուշագրերի կնքմանը կամ վերակնքմանն առնչվող աշխատանքները: